ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

<<ՀՀ ԿԳՄՍՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԽՈՒՄԲ՝ ԴԱՎԱՐՆԵՐ- I ԽՈՒՄԲ

ԹԵՄԱ՝ Գեղագիտական ճաշակի դաստիարակումն ու զարգացումը տարրական դասարաններում

ՀԵՏԱԶՈՏՈՂ՝ Հերիքնազ Սողոյան

(Զոլաբարի Ս.Վարդանյանի անվան N2 մ/դ)

ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Բեյբության

Մարտունի

2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ 1.Գեղագիտական ճաշակի դաստիարակության տեսական հիմքերը.....5

1.1.Գեղագիտական ճաշակի դաստիարակման նպատակներ ու խնդիրները.....6

1.2.Գեղագիտական ճաշակի դաստիարակության հիմնախնդիրը դպրոցական հանրակրթական համակարգում.....8

Գլուխ 2.Գեղագիտական ճաշակի դաստիարակման ձևավորումն ու զարգացումը տարրական դասարաններում.....11

Եզրակացություն և վերջաբանություն.....30

Օգտագործված գրականություն.....31

Ներածություն

Թեմայի արդիականությունը

Այսօրվա կյանքի առաջընթացն ու սրընթաց զարգացումները դպրոցի առջև դնում են մի շարք կարևոր խնդիրների լուծում, որոնցից առաջնահերթը սովորողների ճանաչողական, հետաքրքրությունների, նրանց ստեղծագործական մտածողության, ինքնություն որոշումներ կայացնելու կարողությունների ձևավորումն ու զարգացումն է: Իսկ նոր պահանջները ենթադրում են նոր և ժամանակակից ձևերի ու հնարների, մեթոդների ու ուղիների որոնում:

Կրթությունը սովորողներին պետք է գիտի համապատասխան գիտելիքներով, որոշակի կարողություններով ու հմտություններով, որոնց ամբողջությունը հնարավորություն է ընձեռում գործնականում կիրառելու ստացած գիտելիքները, հարստացնելով ճանաչողական գործունեության սեփական փորձը, զարգացնելու տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները: Իսկ այս ամենի արդյունքում կձևավորվի ներդաշնակ զարգացած անձ և քաղաքացի:

Հանրակրթական ոլորտում բարեփոխումներ իրականացնելու նպատակով ստեղծվել են կրթական նոր փաստաթղթեր, որոնցով փորձ է կատարվում դպրոցը մոտեցնել կյանքին և պատրաստել կյանքի ցանկացած փոփոխությանը դիմակայող, ճկուն մտածելակերպ ու գործելակերպ ունեցող, ինչպես նաև աշխարհը գեղագիտորեն ընկալող անհատ:

Արդի դպրոցում բավականաչափ աշխատանքներ են տարվում վերոհիշյալ բաղադրիչների հաջող իրականացման ուղղությամբ: Սակայն խնդիր է հարուցում սովորողների գեղագիտական ճաշակի դաստիարակության իրականացումը: Սրանով է պայմանավորված սույն հետազոտության արդիականությունը:

Հետազոտության առարկան է սովորողների գեղագիտական դաստիարակությանն ուղղված մեթոդական հնարների, աշխատանքային բովանդակության պայմանների կազմակերպումն ու իրականացումը:

Հետազոտական վարկածն է: Ենթադրվում է սովորողների հետ տարվող մանկավարժական աշխատանքներում նրանց գեղագիտական ճաշակի դաստիարակության զարգացմանը կնպաստի

- Նորագույն տեխնոլոգիաների ու մեթոդների կիրառումը:
- Մանկավարժական նոր մոտեցումներ:

Գլուխ 1.Գեղագիտական ճաշակի դաստիարակության տեսական հիմքերը

Ընդհանրապես գեղագիտական ճաշակի դաստիարակությունը շատ պատասխանատու և դժվար գործընթաց է: Ինչ-որ հատուկ կետեր ու կանոններ չկան այն լիարժեք բացահայտելու համար:

Գեղագիտությունը կազմում է մարդու ընդհանուր զարգացվածության զգալի մասը: Որքան խորն է գեղագիտական ճաշակի ընկալումը, այնքան ամուր է մարդ-արվեստ, մարդ-բնություն կապը: Գեղեցիկը ընկալող մարդը արվեստի մեջ ավելի խոր ու նուրբ է ըմբռնումմ բնության, շրջապատի իրերի, մարդու գեղեցկությունը:

Գեղագիտությունը (հունարեն՝ զգայական ընկալում) ընկալվում է որպես «գեղեցիկի փիլիսոփայություն» կամ «արվեստի փիլիսոփայություն»: Այն դրսևորվում է արվեստում, բնության մեջ, հասարակական կյանքում, նյութական արտադրության, գեղարվեստական նախագծման մեջ և այլուր:

Գեղագիտությունը գիտություն է համամարդկային արժեքների պատմականորեն պայմանավորված էության , դրանց ստեղծման, ընկալման, գնահատման ու յուրացման մասին: Դա փիլիսոփայական գիտություն է գեղեցկության օրենքներով, աշխարհի յուրացման առավել ընդհանուր սկզբունքների մասին մարդու գործունեության պրոցեսում և ամենից առաջ արվեստում, որտեղ ձևավորվում է, ամրապնդվում և բարձր կատարելությանն են հասնում աշխարհի այդպիսի յուրացման արդյունքները:

Գեղագիտությունն ունի բազմադարյան պատմություն: Այդ գիտության զարգացման ընթացքում փոխվել են ոչ միայն գեղագիտական հայացքները, այլև նրա կողմից ուսումնասիրվող հարցերի շրջանակը, նրա բուն առարկան ու խնդիրները: Գեղագիտական հայացքները սաղմածնավորվել են վաղնջական ժամանակներում՝ Հին Հունաստանում, ավելի ուշ՝ Սոկրատեսի, Պլատոնի և Արիստոտելի աշխատություններում: Ակսպիսով գեղագիտական ճաշակի դաստիարակության հիմքերը պիտի փնտրել արվեստում:

1.1. Գեղագիտական ճաշակի դաստիարակության նպատակն ու խնդիրները

Գեղագիտական ճաշակի դաստիարակությունը գեղեցիկը ընկալելու, զգալու, գնահատելու և գեղագիտական արժեքները ստեղծելու, ստեղծագործական անհատի ձևավորմանը նպատակաուղղված գործընթաց է: Այսպիսի սահմանումը նույպես վերաբերում է հասուն անհատին, մինչդեռ երեխաները նույնպես ընդունակ են արձագանքելու, շրջապատող միջավայրի գեղեցկությանը, բնությանը, երաժշտությանը՝ ձգտելով ստեղծագործել, երգել, պարել, նկարել և այլն:

Ստեղծագործող անձնավորությանը բնորոշ է ակտիվ դիրքորոշում, գեղեցիկն ընկալելու, զգալու և գնահատելու ընդունակություն: Գեղագիտական ճաշակի դաստիարակության հիմքում ընկած է հուզազգացմունքային ոլորտի զարգացումը և զգայական փորձի հարստացումը, որը ակտիվացնում է իմացական գործունեությունը և դրդում ստեղծագործության, բացահայտում երեխայի ընդունակությունները և ձևավորում անձնային կարևոր հատկություններ: Գեղագիտական ճաշակի դաստիարակության խնդիրներն են՝

1. Գեղեցիկի, արվեստի մասին տարրական գիտելիքների փոխանցում
2. Գեղեցիկին կամ տգեղին հուզականորեն համարժեք արձագանքելու ունակության ձևավորումը
3. Գեղեցիկը ճանաչելու պահանջմունքի զարգացումը
4. Գեղագիտական ճաշակի դաստիարակությունը

Նշված խնդիրներն ուղղված են երեխաների գեղագիտական գիտակցության ձևավորմանը՝

Երկրորդ խմբի խնդիրները նպաստում են գեղագիտական-գեղարվեստական ընդունակությունների զարգացմանն ու կարողությունների ձևավորմանը: Այդ խնդիրներն են.

1. Նկարչական կարողությունների ձևավորում ու զարգացում

2. Ծեփակերտման ունակությունների և կարողությունների ձևավորում
3. Ապլիկացիայի ուսուցում
4. Երաժշտական ունակությունների զարգացում
5. Պարարվեստի տարրերի ձևավորում
6. Դեկորատիվ արվեստի տարրերի ձևավորում
7. Գեղարվեստա-խոսքային ընդունակությունների զարգացում, արտահայտիչ խոսքի ձևավորում

Այս բոլորը իրագործում ենք դպրոցում դասավանդվող առարկաների միջոցով:

1.2. Գեղագիտական ճաշակի դաստիարակության հիմնախնդիրը դպրոցական հանրակրթական համակարգում

Անհամեմատելի են այսօրվա դպրոցն ու հասարակությունը, աշակերտի ու մանկավարժի հոգեբանությունը տարիներ առաջ եղածի հետ: Ավանդական ուսուցման նպատակը հիմնականում գիտելիքների հաղորդումն էր, մասամբ էլ՝ հմտությունների ձևավորումը: Այսօրվա թելադրանքն այլ է: Դպրոցի առջև ծառացած են նոր խնդիրներ, որոնց արդյունավետ լուծման համար անհրաժեշտ է որոնել ու գտնել նոր ուղիներ, նոր միջոցներ: Պետությունն ու հասարակությունն այնպիսի քաղաքացու պահանջ ունեն, որն ունի խոր գիտելիքներ, որոշակի կարողություններ ու հմտություններ, գեղագիտորեն է ընկալում աշխարհը: Ցանկացած բնույթի ուսումնական գործընթացի հիմնական նպատակներից մեկը սովորողների մեջ այնպիսի հոգեվիճակների ստեղծումն է, որոնք կապահովեն նոր և կայուն որակների ձևավորումը և դրանց կիրառումը տարբեր ոլորտներում: Դեռ իր ժամանակին հայազգի մանկավարժագետ Հովհաննես Հինդլյանը կարծում էր, թե ուսումը լինելու է այնպես, որ երեխաները դպրոցն ավարտեն ոչ միայն անհրաժեշտ գիտելիքներով զինված, այլ բարոյապես, ֆիզիկապես և գեղագիտորեն հասունացած, իսկ դրա համար դպրոցը մոտեցնել կյանքին: «Համաձայն ընթացքի կյանքի հետ, գիտակցե՛ք, որ ազգ մը այնքան արժե, որքան իր դպրոցը, իսկ այդ դպրոցի խնդիրն է աշակերտը մարդ ընել»,-գրում է մեծ մանկավարժը:

Գեղագիտական ճաշակի դաստիարակության համակարգում առաջնային պիտի համարել ոչ միայն դպրոցի դերը, այլ տարբեր տարիքի աշակերտների համար երաժշտական, երգի, պարի, կերպարվեստի ժամանակակից ուսումնամեթոդական ձեռնարկների, մանկավարժական վերապատրաստումների դասընթացների կազմակերպումը, վառատոնների, ցուցահանդեսների, ստուգատեսների, մրցույթների

կազմակերպման գործում, հանգստի, ժամանցի, և մշակութային կյանքի կազմակերպումը, շնորհալի երեխաների բացահայտումը:

Գեղագիտական դաստիարակության խնդիրների լուծմանն են ուղղված նա(ֆկուրսիաները, շրջայցերը, եկեղեցիների այցերը, ավանդական ծիսակատարությունները: Այսօր ֆայլեր են կատարվում, ծրագրեր են ներկայացվումմ սովորողների գեղարվեստական կրթության և գեղագիտական ճաշակի դաստիարակության ամբողջ համակարգի խնդիրների լուծման ուղղությամբ: Հանրակրթական ուսումնական հաստատություններում հանրակրթական դպրոցի դասավանդվող առարկաների շարքում, որոնք կոչված են գեղագիտական խնդիրների լուծմանը, ներդրվել են «Ազգային պարարվեստ» և «Համաշխարհային մշակույթի պատմություն» առարկաները: Առօրյայում գործածվում է նաև «գեղագիտական կամ գեղարվեստական ճաշակ հասկացությունը», որը դրսևորվում է գեղարվեստական գործունեության ոլորտում՝ գեղարվեստական ստեղծագործության գնահատումը, ստեղծումը, ընկալումը: Գեղարվեստական ճաշակի ձևավորման վրա մեծ ազդեցություն ունեն սովորողի սոցիալական դրությունը, տվյալ ժողովրդի ազգային ավանդույթները, տեղի գեղարվեստական մշակույթի յուրահատկությունները: Իսկ գեղագիտական ճաշակի ձևավորումը գեղագիտական դաստիարակության նպատակներից է: Դպրոցի հիմնախնդիրներից մեկն էլ այս ճաշակի ձևավորումն ու զարգացումն ապահովելն է, այն է, «երաժշտական ճաշակ», «գրական ճաշակ» ը այլ իմաստներով:

Գեղագիտական դաստիարակության իրականացումն հնարավորություն է ստեղծում դպրոցականների մեջ վաղ տարիքից ձևավորելու և զարգացնելու վեհի ըմբռնումը ու գնահատումը: Առարկաների, երևույթների, շրջապատող ամեն ինչի արտաքին տեսքից զատ՝ տեսնելու նրանում գրտացոլվող գեղագիտական բարձր արժեքը՝ վեհությունը, ֆիտելու հերսականության, մարդու, ժողովրդի պայքարի ու ստեղծագործական գործունեության պաթոսի հետ սերտորեն կապված:

Գեղագիտական դաաստիարակությունը բազմակողմանի զարգացած անձնավորության հիմնական հատկություններից մեկն է: Տարրական դասարաններում այն իրականացվում է բոլոր առարկաների,

այդ թվում նաև մաթեմատիկայի դասերի ընթացքում: Սովորողների մեջ գեղագիտական ճաշակի ձևավորումը խիստ աշխատատար գործընթաց է և ուսուցիչների կարևորագույն խնդիրներից մեկը:

Աշխարհում գործում է ոչ միայն անհրաժեշտի ու օգտակարի, այլև գեղեցիկի օրենքը: Այն պահից ի վեր, երբ մարդը կարողացավ հիանալ ծաղկաթերթիկների գեղեցկությամբ, մայրամուտով և բնության այլ հրաշալիքներով, նա սկսեց հիանալ նաև իրենով: Գեղեցիկը գոյություն ունի մեր կյանքից ու գիտակցությունից անկախ, սակայն բացահայտվում է մարդու կողմից և ապրում նրա հոգում:

Ըստ Սուխոմլինսկու բազմակողմանի դաստիարակված անձնավորություն ձևավորելու համար անհրաժեշտ է մեծ ուշադրություն հատկացնել գեղագիտական դաստիարակությանը:

Երեխայի համար գեղեցիկի աշխարհը սկսվում է ընտանիքից, մարդու զգայական ընկալումը, ոգևորությունը, ճաշակի ձևավորումը, այլ մարդու հոգևոր աշխարհ ներթափանցումն առաջին հերթին կայանում են ընտանիքում:

Երեխայի զարգացման ընթացքում ծնողների ուշադրության պակասի հետևանքով նկատվում են մտավոր, ֆիզիկական, զգացմունքային, հոգեկան թերզարգացումներ:

Ժամանակակից դպրոցում սովորողի գեղագիտական դաստիարակությունն ընդհանուր դաստիարակության կարևորագույն խնդիրներից մեկն է: Այն իրականացնում են նաև դասվարները: Վերջիններս գործ ունեն մարդկային գիտակցության ամենանուրբ շերտերի հետ և ձևավորում են աճող սերնդի հոգևոր կերպարը: Նրանց խոսքը դաստիարակչական կատարյալ գենք է: Գրավոր և բանավոր խոսքը դպրոցում գեղագիտական դաստիարակության գլխավոր միջոցներ են: Գեղագիտական դաստիարակություն իրականացվում է ամբողջ դասի ընթացքում՝ բոլոր առարկաների դասավանդման ժամանակ: Ուշինսկին գրել է.«Յուրաքանչյուր գիտության մեջ շատ թե քիչ կա գեղագիտական ասպեկտ, որը դաստիարակը պետք է նկատի ունենա երեխաներին հաղորդելու համար:»

Գլուխ 2. Գեղագիտական ճաշակի դաստիարակման ձևավորումն ու զարգացումը տարրական դասարաններում

Գեղագիտությունը բացահայտում է այն գեղեցկությունն ու վեհությունը, որը մինչև այժմ աննկատ է մնացել: Գեղագիտությունը ոչ միայն գեղագիտական որակներ է հայտանբերում, այլ կյանքն ընդգրկում է հնարավորին չափ ամբողջությամբ, նրա հակասություններով ու մութ կողմերով հանդերձ:

Մայրենիի դասաժամերին գեղեագիտության կարևոր խնդիրներից մեկն այն է, որ պարզաբանվի, թե ինչպես են կյանքի տգեղ, նսեմ երևույթները, արվեստի առարկա դառնալով, գեղագիտական հաճույք պատճառում:

Գեղագիտորեն դաստիարակված մարդը ամեն ինչում տեսնում է և ընկալում գեղեցիկը, իսկ գեղեցկությունն ընկալելը խոև մարդկային հատկանիշ է: Գեղեցկությունը մեր կյանքի ուրախությունն է: «Մարդը մարդ դարձավ, երբ տեսավ լազուր երկնքի խորքը, աստղերի առկայծումն, վերջալույսի վարդագույն հեղեղումը, տափաստանի լայնարձակ տարածությունների թափանցիկ մշուշը, բոսորագույն մայրամուտը, քամոտ օրից առաջ, մշուշաքողի դողալը հորիզոնում, կապույտ ստվերները մարտի ձյունակույտերում, կռունկների երամը կապույտ երկնքում, արեգակի արտացոլումը առավոտյան ցողի բյուրավոր կաթիլներում, անձրևի մոխրագույն թելերը, ամպամած օրը, մանուշակագույն ամպը յասամանի թփի վրա, ձնծաղիկի քնքուշ ցողունը և կապույտ զանգակը- տեսավ և,զմայլված, քայլեց աշխարհում՝ ստեղծելով նոր գեղեցկություն»,-գրում է Վ.Ա.Սուխոմլինսկին:

Գեղեցկությունն ընկալող աշակերտի ազնվությունը կծաղկի: Գեղեցիկի մասին բառերը տեղ են հանսում միայն այն ժամանակ, երբ աշակերտը սրտով է զգում գեղեցկությունը: Աշակերտները

գեղարվեստական ստեղծագործություններ ուսումնասիրելիս սովորում են տեսնել, ունկնդրել շրջական աշխարհի «երաժշտությունը» հասկանալ այն, հրճվել նրանով:

ԱՇՈՒՆ

Հովհ. Թումանյան

Դեղնած դաշտերին
Իջել է աշուն,
Անտառը կրկին
Ներկել է նախշուն:

Պաղ-պաղ մեգի հետ
Փչում է քամին,
Քշում է տանում
Տերևը դեղին:

Տխուր հանդերից ,
Մարդ ու անասուն
Քաշվում են կամաց
Իրենց տունն ու բուն:

Բնապատկերների նկարագրությունը սովորողների սրտում արթնացնում է փաղաքուշ, բարյացակամ, հոգատար վերաբերմունք դեպի կենդանին, բնությունն ու գեղեցիկը: Սոխոմոլինսկին գրում է. «Ես դաստիարակության մեծ իմաստ եմ տեսնում այն բանում, որ երեխան տեսնի, հասկանա, զգա, ապրի, ըմբռնի որպես մեծ գաղտնիք կյանքի զարթոնքը բնության մեջ»: Գարնանային առաջին ձնծաղիկը, ծլվլոցը, կռինչը, ֆչֆչոցը նրանց հոգում պիտի արթնացնեն հավերժական կյանքի գեղեցկությունը: Եվ որքան նրանք խորն ըմբռնեն ու հասկանան այդ գեղեցկությունը, այնքան կձգտեն ստեղծելու գեղեցիկը: Բնության գեղեցկություն զգալը, գեղեցիկի ստեղծումը մեծ մանկավարժն անվանում է «պատանի հոգու թանկագին վարժություններ», որոնք անհրաժեշտ են, ու աշակերտը ձգտի տեսնել մարդու և նրա հոգու գեղեցկությունը, ջգտի իր մեջ գեղեցիկը հաստատելու, արհամարհի թուլությունը, վոհբոգությունը, թուլակամությունը:

Բարոյական և գեղագիտորեն դաստիարակված աշակերտը սիրահարվում է ոչ միայն արտաքին գեղեցկությանը, այլև ունակ է զգալու ներքին մտքերն ու զգացմունքները: երբ աշակերտը ընբռնում և զգում է գեղցկությունը, պատրաստ է ինքնադաստիարակման: Նա աշխատում է ուղղել իր հոգին, խիղճը, զգացմունքները, համոզմունքները: Գեղեցկությունը հայելի է, որում նա տեսնում է իրեն, որի շնորհիվ էլ այսպես, թե այնպես կվերաբերվի ինքն իր նկատմամբ:

Դպրոցականի գեղագիտական ընկալումը նաև այն է, որ գեղեցիկի ճանաչումը, իմացումը ծնեն անհանգստություն, տագնապ, ձգտում՝ շրջապատը դարձնելու ավելի լավը, քան այն կա: Շատ կարևոր է, որ կրտսեր տարիքից սովորողների գիտակցության մեջ կնոջ, աղջկա, մոր, գեղեցկությունն շրջաոատված լինի բանաստեղծական լուսապսակով: Մարդ չի կարող դառնալ հոգեպես հարուստ, դաստիարակի խոսքը նրբորեն ունկալող, եթե նա չի խոնարհվում կնոջ գեղեցկության ու վեհության՝ նրա դերի, կոչման, սիրագործության առջև: Յուրաքանչյուր սովորող պիտի հիացմունքի զգացումով բացահայտի իր համար մի իսկություն՝ աշխարհում մորից ավելի գեղեցիկ ոչինչ չկա, որը դաստիարակում է հայրենիքին հավատարիմ հերոս որդի: Աշակերտը պիտի համակվի զմայլանքի, հիացմունքի զգացումով՝ լսելով բանաստեղծություն, պատմվածք, ցանկացած ստեղծագործություն մոր մասին:

ՄԱՅՐՍ

Հովհաննես Շիրազ

Մեր հույսի դուռն է մայրս,

Մեր տան մատուռն է մայրս,

Մեր օրորոցն է մայրս,

Մեր տան ամրոցն է մայրս

Մեր հերն ու մերն է մայրս,

Մեր ճորտն ու տերն է մայրս,

Մեր տան անտունն է մայրս,

Մեր արծվաբունն է մայրս,

Մեր տան ծառան է մայրս,

Մեր տան արքան է մայրս,

Մեր տան անճարն է մայրս,

Մեր դեղ ու ճարն է մայրս,

Մեր տան աղբյուրն է մայրս,

Մեր ծարավ քույրն է մայրս,

Մեր տան անքունն է մայրս,

Մեր անուշ քունն է մայրս,

Մեր տան ճրագն է մայրս,

Մեր արեգակն է մայրս:

Մայրս, մեր հացն է մայրս,

Մեր տան Աստվածն է մայր;

Ուսուցչի ճիշտ,հանգամանալից, կազմակերպված, պլանավորված գրագետ դասընթացը մեծապես կնպաստի իր սանների գեղագիտական ճաշակի դաստիրակության զարգացմանը: Ուսուցիչը անդադար պետք է կատարի որոնողական, հետազոտական, ինքնակատարելագործման աշխատանք, այն նվիրելու մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործին; Գեղագիտորեն մեծ բավականություն, հրճվանք ու բերկրանք են պատճառում մայրենիից կազմակերպված խաղերը, որը նպաստում է գեղագիտական ճաշակի զագացմանը:

Մենք էլ

Խաղը կարելի է անցկացնել դասասենյակում: Ուսուցիչը դանդաղ պատմում է որևէ պատմվածք: Երբ նա ասում է այնպիսի բան, որը համարվում է «մենք էլ» դարձվածքին, երեխաները ասում են մենք էլ,

իսկ եթե ոչ՝ լռում են: Օրինակ՝ «Ես գնացի անտառ», երեխաները ասում են՝ մենք էլ: «Շատ մասուր հավաքեցինք», երեխաները՝ մենք էլ: «Մասուրները կարմրին էին տալիս թփի վրա»... (Եթե երեխաները սխալմամբ ասում են «մենք էլ», դասարանով մեկ հնչում է ուրախ ծիծաղ):

Իմացիր որ հեքիաթից է

Խաղը անցկացվում է դասասենյակում: Ուսուցիչը զգուշացնում է երեխաներին, որ ինքը հարվածներ է ասլեւո ծանոթ հեքիաթներից, երեխաները պետք է ուշադիր լսեն որ հեքիաթից է ասվածը և ով է գրել այդ հեքիաթը:

Օրինակ՝

Ուստեն եկավ քուրքը հագին,
Շանը տեսավ բեղի տակին
Իրեն-իրեն քիչ փնթփնթաց,
Ու մուշտարու վրա թընդաց:

Հովհ.Թումանյան
«Շունն ու կատուն»

Խեղճ Մանուշը վա՜յ է տալիս,
Վա՜յ է տալիս, լալիս, լալի,
Բայց էլ ի՞նչ աներ,
Բայց էլ ո՞նց աներ...

Հովհ.Թումանյան
«Գառնիկ ախպեր»

Ուսուցչի խնդիրն է աշակերտին սովորեցնել տեսնելու, լսելու և շոշափելիության աստիճան զգալու բանաստեղծական պատկերները, ձգտի ստեղծագործական աշխատանքների միջոցով գեղագիտական հաճույք ստանալ: Ցանկացած նյութ եռամիասնության մեջ ուսուցանելու դեպքում հնարավոր կլինի զարգացնելու աշակերտի երևակայությունը, հետևաբար նաև մտածողությունը, սրանց մասինության մեջ էլ ձևավորվում է գեղագիտական խոսքը:

ԳԵՏԸ

Համո Սահյան

Գետը լեռներից շառաչով գալիս

Եւ անց է կենում դաշտերի միջով,

Կանչում, կարկաչում, հորձանք է տալիս,

Ափերն է զուգում զմրուխտ կանաչով:

Պաղ ջուր է տալիս մարդուն ու բույսին

Եւ կաթիլն անգամ զուր չի կորցընում,

Կյանքի է կոչում կայաններ լույսի

Եւ ինքն իր ճամբին լույս տալով գընում...

Այսպես, վաստակած նա ծովն է մտնում,

Եւ ծովն է վերջին կայանը նրա,

Բայց ծովի մէջ էլ հանգիստ չի գտնում,

Նավեր է պահում իր կրծքի վրա:

Դու էլ գետի պես անցիր քո ճամփան

Եւ նման եղիր գետի հորձանքին,

Որ կյանքիդ վերջին կայանում անգամ

Ինչ-որ մի բանով պետք լինես կեանքին:

Բանաստեղծությունն սովորելուց, ընթերցելուց հետո սովորողը լրացնում է հետևյալ աղյուսակը.

Ի՞նչ պատկերներ էի տեսնում	Ի՞նչ ձայներ էի լսում	Ի՞նչ էի զգում
գետը, դաշտեր, կանաչ	շառաչով, հորձան է տալիս	ուրախություն, աղմուկ, սառնություն
ջուր, բույս, ճամփա, նավ		թարմություն, ալեկոծություն

Երաժշտության դասերին երեխաների գործունեությունն կարևոր ձևերից մեկը շարժումային խաղերն են, որոնք միևնույն ժամանակ լուծում են երաժշտական և գեղագիտական դաստիարակության մի շարք խնդիրներ: Շարժումային խաղերում, պարերում օգտագործվում են ազգային պարի տարրեր (պտույտներ, ծնկածալ, ծափեր, հատվածներ) հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները:

«Վագք» հնչում է արագ, աշխույժ երաժշտություն (օրինակ՝ Ա.Խաչատրյանի «Սուսերով պարը» «Գայանե» բալետից) երաժշտության բնույթն առաջացնում է վազելու, թռչկոտելու ցանկություն, որի ընթացքում երեխան լիցքաթափվում է և աշխուժանում:

Գեղագիտական հաշակի զարգացմանը և դաստիարակությանը նպաստում են կերպարվեստի, տեխնոլոգիայի և ֆիզկուլտուրայի դասաժամերը, որտեղ երեխաները աշխատանքները կատարում են մեծ սիրով և մասնակցում են բարձր տրամադրությամբ և ոգևորությամբ:

Գեղագիտական տարր է պարունակում նաև մաթեմատիկայի տարրական դասընթացը: Գեղագիտական դաստիարակություն իրականացվում է խնդիրներ լուծելիս, հաշվողական հմտությունների ձևավորման գործընթացում, երկրաչափական նյութի մեջ և մաթեմատիկական խաղերի ժամանակ: Մաթեմատիկական խաղերի ժամանակ աշակերտները մեծ բերկրանք ու հրճվանք են ապրում

- Գտիր նախորդ և հաջորդ թվերը

  Խաղն անցկացվում է դասասենյակում: Խաղի համար անհրաժեշտ է ունենալ թվաբարտեր և դրանք կախելու հարմարանք: Ուսուցիչը բացատրում է խաղը, որ ինքը կկախի մի թվաբարտ,

օրինակ 7 իսկ խաղացող երեխան պետք է գտնի այդ թվի նախորդ և հաջորդ թվերը ու կախի:

- Գտիր քո շրջանը

  Խաղը հարմար է անցկացնել բակում, որտեղ ուսուցիչը գծում է 10 շրջան, որոնց կենտրոնում գրում է մի որևէ թվանշան: Յուրաքանչյուր երեխա ստանում է թվանշանով մեկ քարտ: Երբ խաղը սկսվում է, երեխաները վազվզում են, թռչկոտում են, «Գտիր քո շրջանը» ազդանշանը լսելուն պես պետք է արագ գտնեն իրենց համապատասխան շրջանները:

  Օրինակ՝ այն երեխաները, որոնց մոտ կան 4 թվանշանով քարտեր, պետք է մտնեն 4 թվանշանով շրջանի մեջ:

Աշակերտների գեղագիտական ընկալման կարողությունների զարգացմանը նպաստում է, երբ երեխաները ծանոթանում են մաթեմատիկական խորհրդանիշին՝ թվին, երբ սովորում են գրել թվանշաններն ու դրանց մասնիկները, որը երեխաների համար հաճելի է ու դուրեկան: Գեղագիտական դաստիարակության գործում մեծ դեր է խաղում նաև վարժությունների լուծումը, որը երեխաների մեջ մշակում է համբերատարություն, հաստատակամություն: Գեղագիտական ճաշակի դաստիարակության օրինակ է աշակերտների տետրերը, որը պետք է լինի արտաքին տեսքը գեղեցիկ, աշխատանքները մաքուր, տետրին նայելով կարող ենք բնութագրել տիրոջը:

Գեղագիտական դաստիարակության մեծ օրինակ է ուսուցիչը: Նա պետք է գրատախտակին գրի գեղեցիկ ու մաքուր, որ գրվածը տեսանելի լինի ամբողջ դասարանին: Ուսուցիչը պետք է զինվի համբերությամբ, որպեսզի աշակերտներին կարողանա դաստիարակել վեհ զգացմունքներով:

Դասի պլան

Դասարան-Զորրորդ

Առարկա-Մայրենի

Տևողություն-45 րոպե

Դաս թեման-Վաչագան Ա,Սարգսյան «Հանելուկային մոլորակը»

Դասի նպատակը՝

1.ակադեմիական

Աշակերտները պետք է

Իմանան՝

- բացի մեր մոլորակից՝ Երկրից, կան նաև այլ մոլորակներ, որոնց մի մասը բացահայտված են.
- մի բան ունենալու համար պետք է ուրիշ բան անես. «Ով աշխատի, նա կուտի»
- նոր բառեր

Կարողանան՝

- ընթերցելու կարողության զարգացում, անսխալ և սահուն ընթերցել պատմվածքը.
- թափանցել հերոսների հոգեբանության մեջ.
- վերարտադրել պատմվածքը տարբեր եղանակներով,
- պատասխանել տրված հարցերին:

2.սոցիալական

- ուշադրության, երևակայության զարգացում,

Անհրաժեշտ պարագաները-գլոբուս, աստղային քարտեզ, թուղթ, գունավոր մատիտներ, դասագիրք,

«Հրաշք տետչ», բառատետր:

Կիրառվող մեթոդներ-Զրույց, մտագրոհ, 5-րոպեանոց շարադրանք, կանխագուշակումների աղյուսակ, քառաբաժան:

Դասի ընթացքը-Կիրառվում է ԽԻԿ եռաստիճան համակարգը:

<u>Խթանում</u>-Դասը սկսվում է զրույցի միջոցով: Ուսուցիչը երեխաներին գլոբուսի և աստղային քարտեզի միջոցով տեղեկացնում է մեր Երկիր մոլորակի և արեգակնային համակարգի այլ մոլորակների մասին: Նաև աշակերտներն իմանում են, որ կան ուրիշ գալակտիկաներ՝ իրենց տիեզերական մարմիններով: Երեխաներին կարելի է ակտիվացնել մտագրոհ մեթոդով՝ նրանց ուշադրությունը հրավիրելով «մոլորակ» բառի վրա:(5 րոպե)



Աշակերտների մտքերը գրառելուց հետո երեխաներին տրվում է 5 րոպե՝ փոքրիկ պատմություն գրելու համար (5-րոպեանոց շարադրանք):

Աշակետներին մեկը գրել էր. Մենք ապրում ենք Երկիր մոլորակի վրա: Գիտեմ, որ կան շատ մոլորակներ՝ Վեներա, Մարս, Յուպիտեր, Պլուտոն և այլը: Եվ գիտեմ, որ մոլորակները մեզանից շատ հեռու են գտնվում, լսել եմ նաև այլմոլորակայինների մասին, սակայն չեմ տեսել: Ուզում եմ լինել որևէ մոլորակում, բայց վախենում եմ:

<u>Իմաստավորում</u>- փուլը սկսում ենք կանխագուշակումների աղյուսակով

Ի՞նչ է լինելու	Ի՞նչ փաստեր կան	Ի՞նչ եղավ

Որպես ակտիվացնող գործընթաց յուրաքանչյուր հատվածից հետո բեմականացնել կարդացածը, մի երեխա աչքերը փակ քայլի, մյուսը ձեռքերը վերև քայլի, իսկ մեկը նստի և լուռ մնա՝ խորհրդավոր տեսք

ընդունելով: Երեխաների երևակայությունը անսպառ է, դրա համար կարելի է երեխաներին թողնել, որպեսզի նրանք այլ տեսակետեր հայտնեն և խաղան: Պատմվածքի վերջին հատվածն ընթերցելուց հետո կտեսնեն, որ պատմվածքի «վերջը» չկա, հեղինակը ուղղորդում է երեխաներին, որ նրանք ինքնուրույն կարողանան որոնել, գտնել գլխավոր հարցի պատասխանը, որից հետո պատասխանել մնացած հարցերին:

- Արմենն ինչպե՞ս կռահեց, թե որն է իր զրուցակիցը:
- Արմենն ինչու՞ վայրէջք կատարեց անծանոթ մոլորակի վրա:
- Ի՞նչ օրենքներ էին գործում «Հանելուկային մոլորակում»:

Հաջորդ քայլում երեխաներին առաջարկվում է վերծանել Հանելուկային մոլորակից ստացված հաղորդագրությունները: Հանձնարարվում է «Հրաշք տետրում» գրել հանելուկները՝ օգնելով մոլորակին: (20 բոպե)

Դասապլան

Ուսուցիչ՝ Հերիքնազ Սողոյան

Առարկա՝	Երաժշտություն	**Ամսաթիվ**	7.9.2021թ.	**Կիսամյակ**	I	**Դասարան**	I
Թեմա՝	«Երաժշտական տնակի բնակիչները» Երգեցողություն. «Ողջու~յն, դպրոց» խոսք՝ Ն.Միքայելյանի, երաժշտություն՝ Մ.Մազմանյանի						
Օգտագործվող նյութեր	Դաշնամուր, ռիթմական նվագարաններ (թմբուկներ, եռանկյունի, զանգակներով դափ, նոտաներ, դասագրքեր, ռիթմի և ինտոնացիայի քարտեր):						
Դասի նպատակը՝	• Սեր և հետաքրքրություն առաջացնել երաժշտության հանդեպ • սովորեցնել ուշադիր լսել և ընկալել երաժշտությունը						
Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները՝	Կարողանալ ճիշտ երգել, իմանալ, որ խոսք ստեղծողը կոչվում է բանաստեղծ, իսկ մեղեդի ստեղծողը՝ կոմպոզիտոր: Կարողանալ երգը երգել ամբողջությամբ, երգը երգել և քայլել, յուրաքանչյուր քայլին ծափել:						
Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական Գործունեություն *Աշակերտներ*	Ուսումնական Գործունեություն *Ուսուցիչ*	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)			
Դասապրոցեսը տևում է 45 րոպե	Սովորել տեքստը, իմանալ երաժշտությունը, խոսքի և երաժշտության	Երեխաներին հաղորդակից դարձնել կատարողական արվեստին;	Ովքե՞ր են երաժշտական տնակի բնակիչները:	Մտագրոհի մեթոդ			

	հեղինակներին: Իմանալ երաժշտական տնակի բնակիչներին:	Երգի ձայնը, երաժշտությունը հասանելի լինի բոլոր աշակերտներին	Ովքե՞ր են երգի հեղինակները: Ինչպե՞ս պետք է նստել երգողության ժամին: Ինչպե՞ս կատարել ռիթմային շարժումները:	
Տնային աշխատանք	Նկարել երաժշտական տնակի բնակիչներից երկուսին:			

Մեթոդմիավորման նախագահ՝ ----------

Տնօրենի ուս. աշխ. գծով տեղակալ՝ ----------

Դասապլան

Ուսուցիչ՝ Հերիքնազ Սողոյան

Առարկա՝	Մայրենի	**Ամսաթիվ**		**Կիսամյակ**		**Դասարան**	II
Թեմա՝	Նիկոլայ Սլադկովի «Ինչու՞ է նոյեմբերը գույնզգույն»						
Օգտագործվող նյութեր	Համակարգիչ, աշնան պատկերով պաստառներ, խաղալիքների, հերոսների համապատասխան թուղթ ու մատիտ բառատետր:						
Դասի նպատակը՝	Աշակերտների երևակայության և պատկերավոր մտածողության զարգացում, կստեղծեն երկխոսություն՝ պահպանելով այն վարելու կանոնները, կամրակայեն բառի մասին ունեցած գիտելիքները:						
Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները՝	Համակարգչի միջոցով լսել Վիվալդիի «Տարվա եղանակներ» սիմֆոնիայի աշնան հատվածի երաժշտությունը, օգտագործում ենք «Ախրոստիքոս» (բանակապ) մեթոդը: Կատարել լեզվային և բառային աշխատանք, հարցադրումների միջոցով ամրակայել նյութը:						
Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական Գործունեություն *Աշակերտներ*	Ուսումնական Գործունեություն *Ուսուցիչ*	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)			
Դասապրոցեսը տևում է 45 րոպե	Կամրակայեն բառի մասին ունեցած գի-տելիքները, Կմշակեն և կկատա-	Թերթիկների բա-ժանում՝ գծված աղյուսակով, տեքստի կարդալը,	Ի՞նչ եք հիշում աշնան մասին: Զորս քույրերից ո՞րն է ամենագե-	Հարցադրումների մեթոդ, Փոխներգործուն գրառումների			

	բելագործեն տեքստը դերերով կարդալու կարողությունը:	բացատրությունը, «փոխներգործուն գրառումների համակարգ»-ի օգտագործումը:	ղեցիկը: Դուք սիրու՞մ եք աշունը: Հատկապես ինչու՞: Ինչպիսի՞ն է նպատակը, ամպը, անտառը:	համակարգ (ՓԳՀ), Աֆրոստիքոս (բանակապ)
Տնային աշխատանք	Նկարել աշնանային տեսարան և գրել աֆրոստիքոս:			

Մեթոդմիավորման նախագահ՝ ----------

Տնօրենի ուս. աշխ. գծով տեղակալ՝ ----------

Դասապլան

Ուսուցիչ՝ Հերիքնազ Սողոյան

Առարկա՝	Մայրենի	**Ամսաթիվ**		**Կիսամյակ**		**Դասարան**	II
Թեմա՝	Վաչագան Ա.Սարգսյան «Կախարդը»						
Օգտագործվող նյութեր	Վինի Թուխի, Դնչիկի և Բուի պատկերներով խաղալիքներ, «կախարդական փայտիկ», գունավոր կավիճներ, դասագիրք, բառատետր, «Հրաշք տետր»:						
Դասի նպատակը՝	Ընթերցելու կարողության զարգացում, սովորել նորածանոթ բառերի ուղղագրությունը, ծանոթանալ է-ով սկսվող բառերի ուղղագրությանը: Մեծատառով գրվում են նաև կենդանիների տրվող հատուկ անուններ:						
Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները՝	Վարժ, արտահայտիչ ընթերցել պատմվածքը, ճիշտ վերարտադրել բովանդակությունը, փոխել տրված տառերը և ստանալ նոր բառեր, բնութագրել Դնչիկին, Վինի Թուխին և Բուին, ինչպիսին էին նրանք, կատարել տեքստային աշխատանքներ: Առաջարկում եմ 2-3 նախադասություն գրել հերոսների մասին:						
Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական Գործունեություն *Աշակերտներ*		Ուսումնական Գործունեություն *Ուսուցիչ*	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)		
Դասապրոցեսը տևում է 45 րոպե	Յուրաքանչյուր բառ կարելի է փոխարինել այլ բառով՝ կատարելով տառային		Պատմել պատմվածքը, ծանոթացնել հերոսներին, ուշադրութ-	Երեխաներ դուք տեսել է՞ք Վինի Թուխի մասին մուլտֆիլմերը:	Խաղային տեխնոլոգիա, զրույց ուղղորդված հարցադրումներով, ըն-		

	փոփոխություններ. արտահայտիչ և սահուն ընթերցել պատմվածքը, բեմադրանացնել պատմվածքը, պատասխանել ավարտում տրված ուղղված գլխավոր հարցերին:	յունը հրավիրել տեքստի վրա, Զրույցի միջոցով վեր հանել բոլոր հարցերը	Ի՞նչ կարող եք ասել նրա մասին: Իսկ Դնչիկը ինպիսի՞ն է: Ձեր կարծիքով Բուն խելացի է: Ինչու՞ Բուն չզարմացավ Թուխի ասածից: Ինչպե՞ս Բուն ջուրը դարձրեց կրար:	թերցանություն, 5 բոպեանոց շարադրանք, Հեղինակի աթոռ
Տնային աշխատանք	Հորինել Վինի Թուխի, Դնչիկի և Բուի մասնակցությամբ փոքրիկ պատմվածք:			

Մեթոդմիավորման նախագահ՝ ----------

Տնօրենի ուս. աշխ. գծով տեղակալ՝ ----------

Դասապլան

Ուսուցիչ՝ Հերիքնազ Սողոյան

Առարկա՝	Մաթեմատիկա	**Ամսաթիվ**	19.10.21թ.	**Կիսամյակ**	I	**Դասարան**	4-րդ
Թեմա՝	Գումարման ստուգումը հանումով						
Օգտագործվող նյութեր	Գիրք, գրիչ, տետր, կավիճ, գրատախտակ, պաստառներ,						
Դասի նպատակը՝	Իմանա՝ Բնական թվերի հետ գործողություններ կատարելը, դրանց հատկությունները, կիրառելու հմտությունների զարգացում						
Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները՝	Կարողանա կատարել թվաբանական գործողություններ բազմանիշ թվերով Հաշվել թվային արտահայտության արժեքը՝ կիրառելով գումարման ստուգումը հանումով, գործողությունների կատարման կարգը:						
Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական Գործունեություն *Աշակերտներ*		Ուսումնական Գործունեություն *Ուսուցիչ*	Հարցադրումներ		Կիրառվող մեթոդ (ներ)	
Խթանում 3ր. Իմաստի ընկալում 25ր. Կշռադատում 10ր. Անդրադարձ 2ր. Տնային աշխատանք 5ր.	Ստուգել և կարդալ տնայինները, ճնարկել կատարած վարժությունները Կատարել դասարա-		Դասը սկսել բանավոր հարցման միջոցով: Կրկնել անցած թեման կա-	Առաջարկել ամրապնդվող հարցեր. Գումարման զուգորդական		Մտագրոհի մեթոդ	

	նում 225ա), 226ա), 227ա), 228ա) վարժությունները:	պելով նորի հետ:	հատկության թեմայից Որոնք են բազմապատկման և բաժանման բաղադրիչները	
Տնային աշխատանք	Լուծել խնդիրը և հանձնարարված վարժությունը:			

Մեթոդմիավորման նախագահ՝ ----------

Տնօրենի ուս. աշխ. գծով տեղակալ՝ ----------

Եզրակացություն և վերջնարդյունք

Մեր հետազոտության արդյունքում գալիս ենք այն եզրահանգման, որ գիտելիքի հիման վրա պիտի ձևավորվեն և զարգանան որոշակի կարողություններ և հմտություններ, պիտի շեշտադրվի և կարևորվի անձի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացումը: Հոգևոր առումով հարուստ ու ներդաշնակ անձի զարգացման կարևոր հատկանիշներից մեկն էլ գեղագիտական հայեցակետի ամրացումն ու դաստիարակությունն է: Գեղագիտական զարգացում ունեցող մարդը ամենուրեք բնության մեջ, արվեստում, աշխատանքում, զանազանում է գեղեցիկը տգեղից, վեհը՝ ստորից: Աշխարհը գեղեցիկի դիրքերից չափող մարդը նաև ազգային մշակութային ժառանգության կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողն է: Ազգային մշակույթի արժեքներով մեծացած անձը աչքի է ընկնում ժամանակակից արվեստի դրսևորումների բազմաշաք զգացողությամբ և տեղին գնահատմամբ:

Ժամանակակից մանկավարժական մոտեցումների, մեթոդների, տեխնոլոգիաների կիրառությունը լայն հնարավորություն են ընձեռում ոչ միայն տարրական, այլև հանրակրթական դպրոցում դասավանդվող մյուս առարկաների դասընթացներում, զարկ տալ աշակերտների գեղագիտական ճաշակի դաստիարակության ձևավորմանն ու զարգացմանը:

Ոչ մի ոլորտ ուսուցչից այնքան համբերատարություն չի պահանջում, որքան գեղեցիկի ընկալում և զգացողություն դաստիարակելիս. զգացմունքների դաստիարակումը ամենադժվար և հաճելի աշխատանքներից մեկն է մանկավարժի գործունեության մեջ:

Օգտագործված գրականություն

1.Ադոռնո Թեոդոր, Գեղագիտական տեսություն, Եր. , Ապոլոն, 2001-256 էջ:

2.Է.Ջրբաշյան, Գեղագիտություն և գրականություն, Երևանի համալս. հրատ. 1983-440 էջ:

3.Հանրակրթական դպրոցի առարկայական չափանիշ և ծրագիր: Եր. Անտարես, 2006-148էջ:

4.Ցա.Խաչիկյան, Էսթետիկայի հարցեր: Հայաստան 1987-175 էջ:

5.Ցու.Բ.Բորև, Գեղագիտություն. Եր. Հայաստան 1982-512էջ:

6.Ցու.Կ.Բաբանսկի: Եր. Լույս. 1986 Մաս 1, 343էջ:

7.Ս.Հ.Հարությունյան, գրական կերպարները և կերպարվեստ: Եր. Լույս 1990:

8.Վ. Ա.Սուխոմլինսկի, Սիրտս նվիրում եմ երեխաներին: Կոլեկտիվ դաստիարակելու մեթոդիկա: Եր. Լույս, 1980-551էջ:

9.Վ.Ա.Սուխոմլինսկի, Ինչպես դաստիարակել իսկական մարդ: Եր. Լույս. 1979-388էջ: